# Երգիր քաջության մասին մի երգ

**Կարդա Սաղմոս 27:6:** Դավիթը սիրում էր երաժշտություն: Նա հաճախ էր երգով գովաբանում Եհովային: Այդ երգերից շատերը օգնեցին նրան քաջ լինելու: Երգելը քեզ էլ կարող է օգնել, որ քաջ լինես:

Կարդա «Համարձակություն տուր մեզ» երգի բառերը: Ի՞նչ պատճառներ ունենք քաջ լինելու, որոնց մասին նշվում է այս երգում: Փորձիր անգիր սովորել այս երգը, ապա երգիր այն ընտանիքիդ անդամների հետ:

ԾԱԼԻՐ



## ԵՐԳ 137

## Համարձակություն տուր մեզ

(Գործեր 4:29)

**1. Քո անվան մասին ուզում ենք**
**Մենք բոլոր մարդկանց հայտնել:**
**Բայց շատերը մեզ փորձում են**
**Անարգել, ամաչեցնել:**
**Մարդկանցից չենք վախենում,**
**այլ քեզ ենք մենք հնազանդվում:**
**Քո ոգու համար աղերսում ենք,**
**Ո՜վ, Եհո՜վա, քեզ ենք խնդրում:**

**(ԿՐԿՆԵՐԳ)**

**Դու մեզ համարձակություն տուր,**
**Վախը մեր միջից վանիր:**
**Քաջություն, վստահություն տուր,**
**Ողջ աշխարհը մեզ լսի:**
**Մոտ է օրն Արմագեդոնի,**
**Բայց մինչ այն կգա, կհասնի,**
**Դու մեզ համարձակություն տուր,**
**Հա՜յր, մեզ լսիր:**

**2. Երբ լցվի վախով մեր սիրտը,**
**Հա՜յր, հիշիր, որ հող ենք մենք:**
**Խոստացել ես, որ կօգնես մեզ,**
**Քեզ պիտի ապավինենք:**
**Դու ուշադրություն դարձրու.**
**Մեզ հալածում են ու սպառնում:**
**Բայց, Եհո՜վա, քո անունից մենք**
**Քաջաբար խոսել ենք ուզում:**

**(ԿՐԿՆԵՐԳ)**



www.jw.org © 2016 Watch Tower Bible and Tract Society of Pennsylvania